ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

------ 2023 N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ
1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63–րդ հոդվածի 1–ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի
մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.
1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի
Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին»
N 1911-Ն որոշման N 9 հավելվածի մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.
1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի
«Աղյուսակ 1.»-ից և «Աղյուսակ 2.»-ից հանել 16-րդ կետը,
2) Շիրակի մարզի առողջապահական համակարգի օպտիմալացման պլանի «III. Մարալիկի տարածաշրջան»
բաժնում լրացնել 3.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.
3.1 «Վերակազմակերպել «Անիպեմզայի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝
այն միացնելով «Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ որպես վերջինիս
բուժակ-մանկաբարձական կետ։ Վերակազմակերպման արդյունքում «Աղինի առողջության կենտրոն» պետական ոչ
առևտրային կազմակերպութունը կունենա 9 բուժակ-մանկաբարձական կետ՝ Շիրակավան, Լուսաղբյուր,
Իսահակյան, Ջրափի, Սարակապ, Հայկաձոր, Անիպեմզա, Բագրավան, Անիավան։
2. Սահմանել, որ վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են «Աղինի առողջության կենտրոն»
պետական ոչ առևտրային կազմակերպութան միջոցների հաշվին։
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝
1) սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ավարտել

սույն որոշմամբ նախատեսված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առողջապահական համակարգի օպտիմալացման ծրագրից բխող՝
սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի
Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական

անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման
մասին» օրենքի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի պահանջներին
համապատասխան,
2) սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի
աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել
հաշվետվություններ կատարված աշխատանքների վերաբերյալ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան